ԱՆԼԻՄ ՕՖԻՍ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ+ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՓԱԹԵԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Բաժանորդը, միանալով Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթին, պարտավորվում է մեկ տարի շարունակ մնալ Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի բաժանորդ և Ինտերնետ ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություններ) մատուցման պահից սկսած առաջին երկու ամիսների ընթացքում Ծառայությունները ստանում է անվճար,

2. Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթին հնարավոր է միանալ միայն Օպերատորի վաճառքի և սպասարկման սրահներից կամ Օպերատորի գործընկեր կազմակերպության վաճառքի սրահներից համակարգիչ գնելու դեպքում: Օպերատորի գործընկեր են համարվում բոլոր այն կազմակերպությունները, որոնք կնքել են գործակալական պայմանագիր Օպերատորի հետ:

3. Հնարավոր է իրականացնել Անլիմ օֆիս սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթին: Տվյալ գործարքն իրականացվում է Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթնին 1 տարով բաժանորդագրության պայմանով, և տվյալ դեպքում Բաժանորդի վրա տարածվում են Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթին 1 տարով բաժանորդագրության բոլոր պայմանները:

4. Հնարավոր է իրականացնել Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի որևէ սակագնի փոփոխություն՝ անցում կատարելով Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի մեկ այլ սակագնի: Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի Բաժանորդները Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետի ընթացքում հնարավորություն ունեն փոխել ընթացիկ սակագինը՝ անցում կատարելով Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի միայն ավելի բարձր ամսավճարով սակագնի:

Սույն կետով սահմանված կերպով փոխելով ընթացիկ սակագինը՝ Բաժանորդը չի ստանում Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի նոր սակագնին բաժանորդագրության դեպքում տրամադրվող 2 (երկու) ամիս անվճար ծառայությունը: Նոր սակագնին անցումը չի երկարացնում Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթով սահմանված պարտադիր բաժանորդագրության ժամկետը:

Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետի ավարտից հետո Բաժանորդները հնարավորություն են ստանում փոխելու ընթացիկ սակագինը՝ անցում կատարելով Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի թե ավելի բարձր, թե ավելի ցածր ամսավճարով սակագնի:

Եթե Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթից օգտվելու համար սահմանված պարտադիր ժամկետն ավարտվել է, ապա սույն կետով սահմանված կերպով սակագնային փաթեթի փոփոխության դեպքում Բաժանորդը չի ստանում նոր սակագնին բաժանորդագրության դեպքում տրամադրվող 2 ամիս անվճար ծառայությունը, ինչպես նաև չի պարտավորվում մեկ տարի շարունակ օգտվել Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթից:

5. Հնարավոր է իրականացնել Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով Անլիմ օֆիս սակագնային փաթեթին: Տվյալ գործարքն իրականացվում է Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի վաղաժամ դադարեցման պայմանով, և այն իրականացվում է միայն Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի վաղաժամ դադարեցման դեպքում սահմանված տուգանքների վճարումից հետո:

Եթե սույն կետով սահմանված կերպով սակագնային փաթեթի փոփոխությունն իրականացվում է Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթից օգտվելու համար սահմանված պարտադիր ժամկետի ավարտից հետո, ապա այն իրականացվում է առանց տուգանքների վճարման:

6.Եթե Բաժանորդը դադարեցնում է Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթին բաժանորդագրությունը մինչև սահմանված ժամկետի ավարտը, կամ Բաժանորդի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հետևանքով ծառայությունը մինչև սահմանված ժամկետի ավարտը կասեցվում է Օպերատորի կողմից, ապա Բաժանորդը Օպերատորին վճարում է տուգանք, որը հաշվարկվում է Ծառայության ակտիվացման ամսաթվի դրությամբ ակտիվացված Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի համար սահմանված պարտադիր գործողության ընթացքում բաժանորդի կողմից վճարվելիք գումարի (ակտիվացված սակագնային փաթեթի ամսավճար ներառյալ ԱԱՀ * 10) և նախքան Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի դադարեցումը Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի շրջանակում հաշվեգրված գումարի տարբերության 80%-ի չափով:

7. Եթե Բաժանորդը կատարել է սակագնային փաթեթի փոփոխություն և միևնույն ամսվա ընթացքում օգտվել է երկու տարբեր Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթներից, ապա տվյալ ամսվա ամսավճարը հաշվարկվում է ըստ օրերի՝ օգտագործած սակագնային փաթեթների ամսավճարների համամասնությամբ:

8. Բաժանորդը կարող է ժամանակավորապես կասեցնել Ծառայությունների մատուցումը՝ Օպերատորի կողմից էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով սահմանված կարգով: Ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման և/կամ վճարումների ուշացման պատճառով Ծառայությունների մատուցման կասեցման դեպքում Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի պարտադիր գործողության ժամկետը երկարաձգվում է կասեցման ժամանակահատվածի տևողությամբ:

Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետը համարվում է ավարտված այն դեպքում, եթե Բաժանորդը օգտվել է Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթից բաժանորդագրության օրվանից սկսած տասներկու օրացուցային ամիս:

9. Օպերատորի և Բաժանորդի միջև բոլոր այն հարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն պայմաններով, կարգավորվում են Օպերատորի կողմից հրապարակված և Բաժանորդի կողմից ժամկետային պայմանագիրը կնքելու պահին գործող խմբագրությամբ էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով, ինչպես նաև Օպերատորի կողմից հրապարակված ցանկացած այլ պայմաններով, որոնք չեն հակասում սույն պայմաններին:

10. Սույն պայմաններում բոլոր հասկացությունները կիրառվում են Օպերատորի կողմից էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով սահմանված իմաստով: